Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 30-ի N 2076 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԵՎ ԱՌԱՆՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ԼՔԵԼՈՒ ՆՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՏԳ ԱԱ 8703 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻՆ ԴԱՍՎՈՂ ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն որոշմամբ նախատեսված պետական աջակցության ծրագրի նպատակն է ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ ժամանակավոր ներմուծված թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման ժամանակ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի և հարկերի մասնակի փոխհատուցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ մեղմելու համար միության օրենսդրության շրջանակներում ֆիզիկական անձանց անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար սահմանված՝ մաքսային վճարների բարձր դրույքաչափերի ազդեցությունն անձանց սոցիալական վիճակի վրա:

2. Սույն ծրագրի շահառու կարող է հանդիսանալ միության անձ հանդիսացող այն ֆիզիկական անձը (այսուհետ՝ շահառու), ով մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ ժամանակավոր ներմուծման նպատակով միության անդամ չհանդիսացող պետություններից միության մաքսային տարածք ներմուծել է ավտոմոբիլ, որը մինչև սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնելու ամսաթիվը նույն նպատակով գտնվել է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Ծրագրի իրականացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե):

4. Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Մինչև սույն ծրագրի իրականացման ժամկետի ավարտը սույն որոշման 1-ին կետով նախատեսված յուրաքանչյուր ավտոմոբիլի համար ազատ շրջանառության նպատակով ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու և միասնական դրույքաչափերով մաքսատուրքերը և հարկերը վճարելու դեպքում յուրաքանչյուր շահառուին տրամադրվող փոխհատուցման գումարը կազմում է՝

1) միասնական դրույքաչափով վճարված մաքսատուրքերի և հարկերի մեծության 40%-ը, եթե վերջինիս կողմից հայտարարագրվել է մինչև 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլ.

2) միասնական դրույքաչափով վճարված մաքսատուրքերի և հարկերի մեծության 70%-ը, եթե վերջինիս կողմից հայտարարագրվել է 5 տարվանից ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլ:

6. Ծրագրի շրջանակներում սույն հավելվածով նախատեսված փոխհատուցումն ստանալու նպատակով շահառուն սույն ծրագրի իրականացման ժամկետում ավտոմոբիլի հայտարարագրման համար ներկայացնում է ազատ շրջանառության նպատակով ներմուծման ուղևորային մաքսային հայտարարագիր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

7. Մաքսային մարմինն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իրականացնում է մաքսային մուտքի անդորրագրի լրացումը և կատարում է միասնական դրույքաչափերով մաքսատուրքերի և հարկերի հաշվակը:

8. Շահառուի կողմից մաքսատուրքերի և հարկերի պարտավորության կատարման նպատակով իրականացվում է հաշվարկված մաքսատուրքերի և հարկերի համապատասխանաբար 60%-ի վճարումը, եթե վերջինիս կողմից ներկայացվել է մինչև 5 տարվա թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլի հայտարարագիր, և 30%-ի վճարումը, եթե նրա կողմից ներկայացվել է 5 տարվանից ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլի հայտարարագիր:

9. Մաքսային մարմնի կողմից միասնական դրույքաչափով հաշվարկված մաքսատուրքերի և հարկերի գումարի և շահառուի կողմից սույն հավելվածի 8-րդ

կետի համաձայն վճարված գումարի տարբերության վճարումն իրականացվում է աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

10. Սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված վճարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն իրականացնում է պետական բյուջեի ծախսային և եկամտային մասերում համապատասխան ձևակերպումներ՝ կոմիտեի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր աշխատանքային օրվա կտրվածքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված՝ հայտարարագիր ներկայացրած շահառուների վերաբերյալ տեղեկատվության և վերջիններիս մաքսատուրքերի և հարկերի մասով փոխհատուցման ենթակա գումարների մասով: Սույն կետով նախատեսված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կոմիտեն ներկայացնում է էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուր աշխատանքային օրվա մասով մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, ինչից հետո ֆիզիկական անձի մաքսատուրքերի և հարկերի գծով պարտավորությունը մաքսային գործառնությունների կատարման նպատակով համարվում է կատարված:

11. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կոմիտեի կողմից տեղեկատվություն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված ձևակերպումը և կոմիտեին ներկայացնում տեղեկատվություն՝ ձևակերպումը կատարված լինելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ